ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» նոյեմբերի 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Դավթաշեն 4-րդ թաղամասի 31 շենքի 12/1՝ 10.8քմ մակերեսով բնակարանը (1 սենյակ) (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 03.09.2013թ. հ.03092013-01-0035 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Գյուլնարա Խաչատրյանին, Արթուր Եղիազարյանին, Գայանե Եղիազարյանին, Էրիկ Եղիազարյանին, Էդիկ Եղիազարյանին և Իրինա Մելիքսեթյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գյուլնարա Խաչատրյանը դիմել է Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշեն վարչական շրջանի 4-րդ թաղամասի 31 շենքի հ.12/1 բնակարանը, որը հանդիսանում է Դավթաշեն 4-րդ թաղամասի 31 շենքի հ.12 երեք սենյակից բաղկացած բնակարանի 1 սենյակը, իր ընտանիքի անդամների անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Երևան քաղաքի ժողովրդական պատգամավորների Մաշտոցի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 12.10.1995թ. հ. 22/165 որոշման համաձայն՝ Դավթաշեն 4-րդ թաղամաս 31 շենքի հ.12 բնակարանը բաժանվել է 2 մասի՝ 2 սենյակը (հ.12 բնակարան) հատկացվել է Գյուլնարա Խաչատրյանին՝ 2 երեխաների հետ, իսկ 1 սենյակը (հ.12/1 բնակարան)՝ Էդիկ Եղիազարյանին (Գյուլնարա Խաչատրյանի ամուսնուն)՝ բնակարանի կոմունալ և օժանդակ հարմարությունները թողնելով ընդհանուր համատեղ օգտագործման:

Երևանի քաղաքապետի 26.05.1997թ. հ.440 որոշմամբ հ.12 բնակարանի երկու սենյակը սեփականաշնորհվել է Գյուլնարա Խաչատրյանի, Գայանե և Արթուր Եղիազարյանների անվամբ, իսկ հ.12/1 սենյակը չի սեփականաշնորհվել:

Քննարկվող հ.12/1 սենյակի վարձակալ Էդիկ Եղիազարյանը, 25.12.2003թ մահացել է (հիմք՝ 25.12.2003թ. հ.229305 մահվան վկայական) և վերջինիս մահվանից հետո տվյալ սենյակը մինչև օրս առանց իրավահաստատող փաստաթղթերի, զբաղեցվում է Գյուլնարա Խաչատրյանի ընտանիքի կողմից:

<<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման>> Հայաստանի Հանրապետության օրենքի 110-րդ հոդվածի համաձայն՝ Դավթաշեն 4-րդ թաղամաս 31 շենքի հ.12/1 սենյակը ներկայումս համարվում է Երևան համայնքի սեփականությունը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական հ.03092013-01-0035):

Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջանի 4-րդ թաղամասի 31 շենքի 12/1 հասցեում գտնվող գույքի անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ